ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Ն.ԳԵՏԱՇԵՆԻ ԱՂՎԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ*

Ք. Մարտունի

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ---------- 5

ԳՈՐԾՆԱԿԱՆՀԱՄԱՏԵՔՍՏ----------7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸՆԹԱՑՔԸ ---------- 10

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ 6-ՐԴԴԱՍԱՐԱՆՈՒՄ՝ԿԱՊՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՇՆՈՐՀԻՎԱՌՈՏԻՎԱՑԻԱՅԻԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐԻՀԵՏ ----------12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ ---------- 14

ՕՐՎԱ ԴԱՍԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ (առաջին դաս)----------15

ՕՐՎԱ ԴԱՍԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ (երկրորդ դաս)---------- 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լինելով բազմամյա փորձով հարուստ մանկավարժ, սիրելով ու արժևորելով յուրաքանչյուր երեխայի, համարելով նրանցից յուրաքանչյուրին յուրօրինակ անհատականություն՝ իր վարքով, մտածելակերպով ու գործելակերպով՝ ես միշտ այժմ էլ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել եմ յուրօրինակ մոտեցում:

Միաժամանակ գտնում եմ,որ իսկական մանկավարժը նույնիսկ տանը իր առօրյա գործերով զբաղվելիս մտովի պետք է դպրոցում լինի,իր սաների հետ,մտածի ու նորանոր բացահայտումներ անի նրանց համար,որոնի նոր ուղիներ,թե ինչպես կարող է հասնել իր ամենակարևոր ու հիմնական նպատակին, այն է՝ձևավորել ու զարգացնել պետությանը անհրաժեշտ գիտելիքներով ու որակներով հարուստ քաղաքացի:Այդպես եմ գտնում,որովհետև իրականում ես այդպիսին եմ:

Նախ թեման շատ առանցքային է,միաժամանակ նաև բովանդակալից,որովհետև մոտիվացիան ուսուցման գործընթացում (և ոչ միայն ուսուցման)ամենակարևոր շարժիչ ուժն է:

Վերջերս կյանքը շատ է արագացել ու շատ դժվարացել տարբեր առումներով:Մենք աշխատում ենք մեծ մասամբ այնպիսի երեխաների հետ,որոնց հայրերը մեծ մասամբ արտագնա աշխատանքի են մեկնում:Երեխաներից շատերը այդ ընթացքում պետք է տան հոգսը իրենց վրա վերցնեն:Շատ դեռահասներ էլ կայանալու գործընթացի մեջ են գտնվում ու հաճախ փողոցը ավելի է ձգում ու իր«վճռորոշ » խոսքը ասում է: Իսկ որոշ դեռահասներ պարզապես աշխատում են և շատ դժվար է արդեն սեփական աշխատանքի արդյունքում փող վաստակած դեռահասին դպրոց բերել,նստեցնել աշակերտական սեղանի մոտ ու «ստիպել» սովորել :«Ստիպել»-ը չակերտներում, որովհետև ստիպելը ենթադրում է բռնություն,իսկ դա, բնականաբար, սովորեցնելու ամենասխալ և ոչ արդյունավետ եղանակն է:

Իսկ սովորեցնել մենք պարտավոր ենք ու դրա համար պետք է ընտրենք ճիշտ մոտիվացիոն մեթոդներ,հատկապես՝ այնպիսիք,որոնց կիրառման արդյունքում աշակերտը կսովորի՝ նույնիսկ չկռահելով, որ սովորում է ու չզգալով սովորելու դժվարությունները: Ես ընտրել եմ այնպիսի խնդիր,որի առկայությունը նկատում եմ ոչ միայն իմ,այլև իմ գործընկերների աշխատանքի ընթացքում:Կուզենայի առավել մանրամասնորեն ուսումնասիրել հիմնահարցը ու հիմնահարցի լուծման համար առաջարկվող բազմաթիվ ուղիները: Խոսքը,ինչպես արդեն ասվել է,մոտիվացիայի մասին է:

Ինչպե՞ս բարձրացնել սովորողների մոտիվացիան:Դրա համար կան տարբեր եղանակներ,տարբեր ուսումնասիրությունների հանդիպեցի,գտա բավականին հետաքրքիր լուծումներ, ուսումնասիրեցի մոտիվացիայի տեսակները,մարդու վրա դրանց ազդեցության մեխանիզմները:Կարելի է ասել,որ մոտիվացիայի բարձրացման եղանակներից մեկն է տարբերակված առաջադրանքների շնորհիվ մոտիվացիայի բարձրացումը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներկա ժամանակներում դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն , որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր ուսումնառողի կրթական կարիքները՝ իր ունակություններին, շահերի և հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հնարավորություն ունի ճշգրիտ կերպով կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով դասապրոցեսի բոլոր էլեմենտները: Տարբերակված ուսուցում կարելի է կազմակերպել երկու եղանակով՝ խմբային և անհատական: Խմբային տարբերակման ժամանակ սովորողները առաջադրանքները լուծում են երեք - չորս հոգով (խմբերով), իսկ երկրորդ դեպքում՝ աշխատում են անհատապես: Երկու դեպքում էլ սովորողին տրվում է հետադարձ կապ՝ մի դեպքում խմբի համար, իսկ մյուս դեպքում՝ ստուգվում է յուրաքանչյուր սովորողի աշխատանքը(*Климова Н.В 2009)*:

Տարբերակված ուսուցման նպատակն է՝ ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար:

Ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների,ճանաչողական պահանջմունքների բավարարման համար:Այն թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը:Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով,որտեղ ուսուցման պայմանները տարբեր են:Իմ դասարանի դեպքում տարբերությունը կայանում է առաջադրանքները ըստ բարդության տարբերակված հանձնարարելու մեջ: Խմբային աշխատանքների

նկարագրություններ ես հանդիպեցի Ջոնսոնների մոտ,համագործակցային ուսուցման հիմքը կազմում են հենց խմբային աշխատանքները: Ըստ հեղինակների՝ խմբի անդամները միմյանց օգնում են,աջակցում,խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը:Ես չեմ առանձնացնի առանձին աշակերտների,որովհետև մոտիվացիայի խնդիրը ես լուծել եմ հենց տարբերակված առաջադրանքներ հանձնարարելու միջոցով և դա մոտիվացրել է բոլորին անխտիր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իմ դասավանդած առարկան ռուսերենն է: Իմ հիմնական նպատակը՝ յուրաքանչյուր դասաժամի ընթացքում ավելացնել ռուսերենի իմացության մակարդակը և՛ բառապաշարային,և՛ քերականական առումով:Իսկ վերջնական նպատակն այն է, որ տարեվերջին կարողանան ցուցաբերել այնպիսի իմացություն,որ անցած տարեվերջի իմացության մակարդակը զգալի չափով գերազանցեն:

Այդ ամենը կատարվում է հետաքրքիր տեքստերի,հոգեհարազատ թեմաների քննարկման միջոցով,որոնք ապահովում են դասերի հանդեպ աշակերտների հետաքրքրվածության մակարդակը: Բայց հենց այստեղ էլ սկսվում են խնդիրները:

Բանն այն է, որ ոչ բոլոր սովորողներն են ցուցաբերում միևնույն վարքագիծը,ուսման հանդեպ միևնույն հետաքրքրվածությունը,մանավանդ՝ բարձր դասարաններում,երբ սովորողները իրենց գիտելիքների պաշարով արդեն շատ են տարբերվում միմյանցից(մեկը յուրացրել է բոլոր տարիների նյութերը,ունի բավականին մեծ պաշար,իսկ մյուսը նույնիսկ կարդալ դժվարանում է):Այս պարագայում արդեն համահավասար մոտեցումը վատ սովորողների համար կլինի անարդյունավետ,որովհետև,երբ սովորողի համար նյութը շատ բարդ է,սովորողը կորցնում է դասի նկատմամբ իր հետաքրքրությունը,հասկանում,որ դասը ընդհանրապես իր համար չէ,և այստեղ ոչ մի տեսակի մոտիվացիա չի կարող ազդեցություն գործել սովորողի վրա:

Այստեղ մեզ օգնության է գալիս տարբերակված առաջադրանքներ տալու հնարավորությունը,միայն թե հարկավոր է այդ հնարավորությունը օգտագործել ճիշտ,տեղին և վարպետորեն,որպեսզի շոշափելի արդյունքը չուշանա:

Համագործակցային ուսուցումը լայնորեն կիրառվելու է իմ հետազոտության մեջ,ուստիև մի փոքր մանրամասնեմ, թե ինչ է դա: Համագործակցային ուսուցման վերաբերյալ ուսումնասիրություններ հանդիպում ենք Ռ.Ջոնսոնի և Դ.Ջոնսոնի աշխատություններում: Համագործակցային ուսուցումը ըստ նրանց կազմակերպվում է դասարանը փոքր խմբերի բաժանելու միջոցով:Այդ խմբերի տեսակներն են՝ ֆորմալ,ոչ ֆորմալ,հենակետային:Ես կազմելու եմ հենակետային խմբեր,դրանք կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ

դասընթացի, ծրագրի ընթացքում:

Ես ընտրել եմ մեկ դասարան՝ 6-րդ դասարանը, այսուհետ նկարագրելու եմ այդ դասարանում սովորողների հետ տարվելիք իմ աշխատանքը,որի արդյունքում յուրաքանչյուր սովորող ստանալու է կոնկրետ իր համար ընտրված առաջադրանք և ձեռնամուխ է լինելու այդ առաջադրանքի կատարմանը:

Միաժամանակ ես նկատել եմ, որ սովորողների մեջ առողջ մրցակցության ոգին պետք է բարձր պահել,որովհետև հատկապես այդ տարիքային խմբում դա շատ մեծ մոտիվացիոն նշանակություն ունի:Հետևաբար ես որոշել եմ օգտագործել այդ մոտիվացիոն գործոնը ևս:Դասարանում սովորում է 30 աշակերտ,հետևաբար ռուսերենի ժամերին դասարանը կիսվում է,կոնկրետ իմ խմբում կա 15 աշակերտ: Ես համագործակցելու եմ մյուս մասին դասավանդող ուսուցչի հետ,մենք ունենալու ենք միասնական,միմյանց հետ համաձայնեցված տարեկան թեմատիկ պլան,ինչպես նաև օրվա դասի պլաններ, որպեսզի վերջում վերջնարդյունքը ամփոփենք միասին:

Ըստ իմ առաջադրած տարբերակման՝ յուրաքանչյուրս մեր խմբի անդամներին ըստ ընդունակությունների բաժանելու ենք 4 խմբերի: Յուրաքանչյուր դասաժամի ընթացքում այդ չորս խմբերի հետ տարվելու են տարբեր տիպի աշխատանքներ:Յուրաքանչյուր խումբը տանը պետք է կատարի իրեն հանձնարարված տնային առաջադրանքը,դասարանում՝ իր դասարանային առաջադրանքը,պետք է պատմի դասի իր հատվածները,եթե թույլ խումբ է,և դասը ամբողջությամբ,եթե ուժեղ խումբ է:

Խմբերի անդամներին պետք է տալ «աճելու» հնարավորություն:Այսինքն՝ եթե մեկնումեկը իր խմբում արդեն շատ լավ է հանդես գալիս,և առաջադիմությունը նկատվում է,ապա նրան պետք է փոխադրել հաջորդ՝ ավելի բարձր խումբ՝միաժամանակ դիտարկել ոչ թե առաջադիմություն,այլ՝ անկում արձանագրած սովորողներին ավելի ցածր խումբ տեղափոխելու անհրաժեշտությունը:

Սա կստեղծի մեծ մոտիվացիա և կարծում եմ,որ ոչ մեկը իր խումբը չի փոխի ավելի ցածր խմբով,այսինքն՝ առաջադիմության անկում չենք ունենա,որովհետև նախնական բաժանման ժամանակ խմբերը կազմվում են ըստ մտավոր ընդունակությունների ու հնարավորությունների, այսինքն, եթե չծուլանան, առաջադրանքները ըստ

էության յուրաքանչյուր խմբի դեպքում հաղթահարելի են,իսկ խմբային մրցակցության դեպքում ծուլանալը բացառվում է, ինչպես ցույց է տվել փորձը:

Այսպիսով ՝ յուրաքանչյուր դասաժամի ընթացքում պետք է սովորողների հետ աշխատել ըստ իրենց ընդունակությունների, տալ առաջադրանքներ և ստուգել ու գնահատել՝ ելնելով աշակերտների ընդունակություններից, ինչպես նաև՝ նախասիրություններից, հետաքրքրության շրջանակներից:

Սովորողների մոտիվացիան, օրինակ, բարձրանում է նաև այն դեպքում, երբ սովորողը ոչ թե զուտ օբյեկտ է դիտվում, որի հետ կապված ուսուցիչը անցկացնում է իր դասապրոցեսը,այլ դիտվում է որպես մարդ, անհատ, ուրույն աշխարհ ունեցող, ուրույն ապրումների կրող, որոշակի ընտանիքում մեծացող և այդ ընտանիքի արժեհամակարգի կրող (և՛ լավ,և՛ վատ իմաստներով): Այնպես,որ ուսուցիչը հաճախ պետք է մտերիմ զրույց ունենա աշակերտների հետ,հենց թեկուզ՝ դասի թեմաների հետ կապված,շարադրություն գրելիս հարցնի սովորողների նախասիրությունների մասին,նույնիսկ՝ այդ պահին նրանց տրամադրության ու տրամադրվածության մասին ու նոր որոշի՝ ինչպիսի առաջադրանք է տալու տվյալ խմբին,օրինակ,եթե շարադրություն, ապա՝ ինչ թեմայով, սովորողների համար ավելի հաճելի կլինի աշխատելը,եթե նրանց հնարավորություն տրվի ինքնուրույն ընտրել թեման(իհարկե,բնականաբար,դուրս չգալով դպրոցական ծրագրի պահանջի շրջանակներից):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Իմ հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ես ընտրել եմ Ն. Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը,դասարանը կիսվող է, իմ խմբում սովորում են 15 աշակերտներ՝7 տղա և 8 աղջիկ:Դասարանում հաջողվել է ձևավորել համերաշխության մթնոլորտ ,համագործակցային մեթոդով աշխատանքները շատ լավ են ստացվում:Դասարանի խնդիրները մոտիվացիայի հետ կապված գրեթե նույնն են,ինչպես բոլոր դասարաններում:Մի քանիսը դժվարանում են սովորել/խոսքը ընդամենը 3 աշակերտի մասին է/,հետ են մնում,իսկ դա կոտրում է նրանց ոգևորությունը և աշխատելու եռանդը:Մնացածները սովորում են,բայց չունեն մոտիվացիա,այդ իսկ պատճառով առանձնապես մեծ ոգևորվածություն չկա և բարձր դասարաններում ,երբ ուսումնասիրվող թեմաները մի փոքր դժվարանան,կարծում եմ,որ շատերը ընդհանրապես կդադարեն սովորել:Ես մտածեցի,որ այդ դասարանում մոտիվացիայի խնդիրը արդեն իսկ պետք է լուծել և եկա այն եզրակացության,որ այդ խնդիրը հետո կլինի լուծել խմբային աշխատանքների հանձնարարման միջոցով,որտեղ խմբի անդամները կարող են օգնել միմյանց,բացի այդ՝մտածեցի,որ եթե յուրաքանչյուր երեխա ստանա իր ընդունակություններին համապատասխան առաջադրանք,ավելի հեշտությամբ կկատարի այդ առաջադրանքները,կոգևորվի արձանագրած հաջողություններից ու կսկսի ավելի լավ սովորել:Մանկագիտական գրականության մեջ դա կոչվում է տարբերակված ուսուցում կամ տարբերակված առաջադրանքների մեթոդ:

Բնականաբար այս հատվածում ներկայացնելու եմ իմ՝ սովորողների հետ կապված հետազոտական աշխատանքը, որի նպատակն է ՝պարզել,թե որքանով է տարբերակված առաջադրանքների շնորհիվ բարձրանում սովորողների մոտիվացիան:Դրա համար նախ պետք է ճիշտ ընտրել առաջադրանքները:Որպեսզի առաջադրանքները ունենան մոտիվացիոն նշանակություն,դրանք պետք է բավարարեն մի քանի պահանջների:

1.Մատչելիություն:Մատչելիության պահանջը ներկայացվում է հատկապես թույլ աշակերտների համար առաջադրանքներ կազմելիս:Թույլ մարդկանց հարկավոր են

հետ տրվող հաղթանակներ: Դրանք կօգնեն նրանց՝ ձեռք բերել ինքնավստահություն,բարձրացնել սեփական

ինքնագնահատականը, իրենց պետական ու կարևոր զգալ, դասի ընթացքում անելիք ունենալ: Իսկ շարունակական դասապրոցեսի ընթացքում առաջադրանքները պետք է կամաց-կամաց ,սովորողի համար աննկատելիորեն բարդացնել: Կարծում եմ, որ այս դեպքում ցանկալի արդյունքը՝ առաջընթացը, ապահովված է:

2.Բարդություն:Ասվածը գուցե պարադոքսալ հնչի, սակայն իրականում առաջադրանքի բարդությունը կարող է շատ ուժեղ խթան հանդիսանալ:Այս դեպքում ուժեղ խումբը ոգևորվում է իր նկատմամբ ցուցաբերած վստահությունից,սկսում վստահել սեփական ուժերին,կենտրոնացնում ողջ ներուժը՝առաջադրանքը հավուր պատշաճի կատարելու համար:Գուցե որոշ դեպքերում անհրաժեշտ լինի ուսուցչի օգնությունը,բայց կարևորն այն է,որ աշակերտներին կստիպենք ոգևորությամբ մտածել,հետաքրքրություն ցուցաբերել և ցանկալի արդյունքների հասնելու ուղիներ որոնել:

3.Հետաքրքրություն:Ուսումնասիրվող նյութը,թեման պետք է ուսումնասիրողի համար հետաքրքիր լինի և համապատասխանի նրա նախասիրություններին:Բոլորն էլ սովորաբար անում են այնպիսի աշխատանք,որն իրենց ավելի հետաքրքիր է,ավելի սրտամոտ,սիրում են խոսել ու մտածել իրենց հետաքրքրող թեմաների շուրջ,այդ իսկ պատճառով պետք է առաջադրանքները կազմել այնպես,որ սովորողները հնարավորություն ունենան խոսել իրենց նախընտրած թեմաների վերաբերյալ:Իհարկե,միշտ ուշադրության կենտրոնում ենք պահելու լեզվական տվյալ իրողության ուսուցումը (օրինակ,եթե անցնում ենք գոյականը, կարելի հանձնարարել սիրած թեմայի շուրջ գոյականներ հիշել և գրել, կամ՝ դրանցով կազմել նախադասություններ,և այլն):

4. **Վերջնարդյունք**: Պրակտիկան ցույց է տալիս,որ գրեթե բոլոր դեպքերում աշակերտները ակնկալում են տեսանելի,իրական վերջնարդյունք՝որևէ տեսակի գնահատականի տեսքով:Դա կարող է լինել ինչպես խրախուսիչ կամ միավորային գնահատումը,այնպես էլ մի կոնֆետը կամ պատվոգիրն ու շնորհակալագիրը:Բոլոր սովորողների համար,անկախ այլևայլ հանգամանքներից,վերջնարդյունքը շատ կարևոր է:Իսկ վերջնարդյունքները կարող են լինել տարբեր տեսակի:Սովորաբար մենք վերջնարդյունք համարում ենք երեխայի ձեռք բերած գիտելիքի, հմտության, կարողության համագումարը, բայց, երբ նայում ես երեխաների տեսանկյունից, դա լրիվ այլ բան է:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ՝ ԿԱՊՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՄՈՏԻՎԱՑԻԱՑԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՀԵՏ

Աշխատանքը սկսվելու է դասարանի՝ իմ խումբը (քանի որ դասարանը մեծ է և, հետևաբար,ռուսաց լեզվի դասաժամերը՝կիսվող) երեք-չորս հոգանոց խմբերի բաժանելով:Դասը միշտ պատմվում,ներկայացվում է կարճ զրույցի ձևով,այնպես, որ հետաքրքիր ու մատչելի լինի բոլոր խմբերի համար:Այնուհետև մնացած ժամանակը հատկացվում է դասարանում առաջադրանքների բացատրմանն ու աշակերտների կողմից կատարմանը, իհարկե, ուսուցչի վերահսկողությամբ: Շատ եմ կարևորում փոխանցիկ դրոշի գործածությունը, դա հիանալի մոտիվացիոն գործոն է այդ տարիքի երեխաների համար: Անկախ այն բանից, որ առաջադրանքները տարբեր են և ըստ բարդության՝ ոչ միանման, դրանք համապատասխանում են տվյալ խմբի մտավոր ունակություններին և ենթադրվում է բոլոր խմբերի կողմից գրեթե միաժամանակյա ու ճիշտ կատարում: Այնպես,որ ստացվում է բավականին արդարացի մրցակցություն և ոչ ոք չի դժգոհում: Ամեն անգամ դասերը անցկացվելու են միևնույն սկզբունքով: Ստորև կներկայացնեմ մի քանի դասաժամի համար կազմված օրվա դասապլանի օրինակներ:

Կիսամյակի կամ թեմայի վերջում կարելի է նախատեսել միացյալ դասաժամ՝միևնույն դասարանի երկու խմբերի մասնակցությամբ: Այդ դասաժամի աշխատանքը,ինչպես նաև մյուս բոլոր դասաժամերի աշխատանքները պետք է համաձայնեցնել մյուս խմբի ուսուցչի կատարած աշխատանքների հետ, իսկ վերջին՝ ամփոփիչ դասաժամի ընթացքում անցկացնել նախօրոք հայտարարված մրցույթ, որտեղ հարցերը կառաջադրվեն դարձյալ ըստ տարբերակված խմբերի,որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա ստանալ իր խմբի մակարդակին բնորոշ հարց,պատասխանի այդ հարցին և իր խմբին բերի ցանկալի միավորներ՝ մասնակցելով ընդհանուր հաղթանակի ձեռքբերմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կիսամյակի կամ տվյալ թեմայի ավարտին, ինչպես նախատեսել եմ, կատարելու եմ տվյալների վերլուծություն և ամփոփում,որպեսզի ինձ հասկանալի լինի իմ կատարած աշխատանքի իրական վերջնարդյունքը:Նախատեսում եմ,որ վերջնարդյունքը լինելու է բավականին գոհացնող:Նախ,անկախ ամեն ինչից, մեծ ձեռքբերում եմ համարում դասարանի ամենօրյա հետաքրքիր,լարված,ուշադիր մթնոլորտի պահպանումը:Գտնում եմ,որ ամեն օր աշակերտները անհամբերությամբ ու հետաքրքրությամբ են սպասելու ռուսաց լեզվի դասաժամերին,աշխատելու են լարված,կլանված,սիրով,սովորելու են ոչ թե պարտադրված կամ ստիպված, այլ ՝ հանուն մեծ ու փոքր հաղթանակների: Իսկ դա արդեն նշանակում է,որ ես իմ խնդիրը կիսով չափ լուծել եմ:

Այնուհետև,անդրադառնալով իմ կազմած աղյուսակին,նրանում արձանագրված տվյալներին,կարձանագրեմ,որ անընդհատ աճ է տեղի ունեցել,ու ժամանակի ընթացքում աշակերտներից մի քանիսը կարողացել են առաջադիմություն ապահովել ու փոխել իրենց խումբը՝ բարձրանալով ավելի բարձր խումբ:

Տարբեր խմբերին տարբեր առաջադրանքների հանձնարարումը ունի նաև մեկ այլ դրական կողմ ևս: Դասի ընթացքը նկարագրելիս ես շատ մանրամասն խոսել եմ տարբեր առաջադրանքների,դրանց կատարումը ստուգելու ձևերից մեկի մասին:Ուշադիր աչքից չի վրիպի այն,որ սովորողները,անձամբ կատարելով ընդամենը մեկ վարժություն,հնարավորություն են ունենում ևս երեք վարժությունների անդրադառնալ,քննարկել,սովորել: Այսինքն՝ կարճ ժամանակի ընթացքում հնարավոր է լինում ավելի շատ բան անել: Այսպիսով,ըստ իս,պետք չէր ապացուցել,որ տարբերակված առաջադրանքների շնորհիվսովորողների մոտիվացիան կբարձրանա,որովհետև դա ինքնին հասկանալի է,բայց իմ խնդիրն էր՝ գործնականում համոզվել ու համոզել,որ դա հնարավոր է,ինչը,իմ կարծիքով,ես կարողացա շատ լավ իրականացնել:,քան որ խմբերի գրեթե բոլոր անդամները կարողանում են կարդալ ու վերարտադրել կարդացածը: Պատասխանել հարցերին ,որոնք տրվում էին ըստ ունակությունների:

Ընթացքում իսկապես շատ հարցերի ես անդրադարձա ավելի հանգամանորեն,և հետազոտական աշխատանքը ավելացրեց իմ գիտելիքները ու,ինչը ավելի կարևոր է՝ անձնական փորձը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.«Ուսանողների սովորելու մոտիվացիայի անկման և բարձրացման պատճառները.ուսանողների և դասախոսների հարցում»-Երևան-2014

2. «Ինչպես բարձրացնել աշխատողների մոտիվացիան.5 մարտավարություն»:

3. «Մոտիվացիա.ինչպես ձեռք բերել և պահպանել այն»-Արուսյակ Մարգարյան:

4. «Մոտիվացիա.ինչ է դա,ինչպես մոտիվացնել ինքնիրեն: Շարժառիթների սահմանում»:

5.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005

6. Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> ,,Дифференцированный подход в обучении информатике,, 2009

ՕՐՎԱ ԴԱՍԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ (առաջին դաս)

Ամսաթիվ	6. 10. 2022	Նշումներ
Դասարան	6-րդ	
Ուսուցիչ	Տ. Պողոսյան	
Առարկա	Ռուսաց լեզու	
Օրվա թեման	На свете есть одна Армения.Путешествие в Армению.	
Հիմնական հասկացություն	Достопримичательности, столица, крепость.	
Միջառարկայական կապեր	Դասը իր թեմայով կապված է լինելու հայոց պատմություն առարկայի հետ:	
Նպատակները	Առարկայական 1.Արտահայտիչ,վարժ,գեղեցիկ առոգանությամբ կարդալ տեքստը,պահպանել ռուսերենին հատուկ արտասանությունը,շեշտադրումը,արտահայտչականությունը 2.Հասկանալ կարդացածի բովանդակությունը 3.Կարողանալ յուրացնել նոր բառերը,հասկանալ դրանց իմաստը և գործածի նախադասությունների մեջ 4.Կարողանալ անել սեփական դատողություններն թեմայի շուրջ, արտահայտել անձնական կարծիք ու դիրքորոշում 5.Կարողանալ բացատրել, թե հայրենասիրությունը ինչով է	

	արտահայտվում 6. Զարգացնել սովորողի երևակայությունը 7. Զարգացնել պատկերավոր մտածելու կարողությունը 8.Զարգացնել հայրենասիրության գաղափար և ազգային արժանապատվություն	
Վերջնարդյունքները	Սովորողները տիրապետեն նյութին, ներկայացնեն տնային առաջադրանքը, կարողանան կարդալ, պատմել նյութը, պատասխանեն տրված հարցերին, արտահայտեն իրենց կարծիքը:	
Անհրաժեշտ նյութեր	Տետր, գրիչ, դասագիրք, բառարան	
Կիրառվող մեթոդներ	Մտագրոհի մեթոդ, հարցերի մեթոդ, տարբերակված առաջադրանքների մեթոդ, խմբային աշխատանքի մեթոդ:	
Դասի ընթացքը.խթանում	Դասը կառուցվելու է ԽԻԿ համակարգով:Նախնական կազմակերպչական մասից հետո,որը,բնականաբար,իր մեջ ներառում է ողջունելը,աշակերտների հաշվառումը,տնային աշխատանքի կատարումը ստուգելու,առաջացած հարցերը քննարկելու պրոցեսը,հարցերի միջոցով անցած դասի ամփոփումը,և այլն,նոր դասը սկսելու ենք Մարիա Պետրովիխի հայտնի տողերով: Հաջորդիվ դասագրքում ձևակերպված է հարց,որի օգնությամբ կարելի է կազմակերպել «մտագրոհ»:Հարցը հետևյալն է՝զբոսաշրջիկներին ավելի շատ ի՞նչը կհետաքրքրի Հայաստանում ,ո՞ր վայրերը:Կազմակերպելու ենք «մտագրոհ»՝ «Հայաստանի տեսարժան	

	վայրերը» թեմայի շուրջ:	
Իմաստավորում	Որպեսզի դասանյութի իմաստը ավելի լավ ընկալեն, դիմելու ենք հարցերի միջոցով մրցույթ կազմակերպելու միջոցին:Այսինքն՝յուրաքանչյուր խումբ պետք է դասի վերաբերյալ կազմի երեքական հարց,տա մյուս խմբին,մեկ այլ խմբից էլ ստանա հարցեր: Պատասխանելով հարցերին՝խմբերը վաստակելու են միավորներ:Սա ինքնին ենթադրում է ,որ ,ճիշտ է,առաջադրանքները տարբերակված չեն,բայց յուրաքանչյուր խումբ հնարավորություն ունի իր իմացության մակարդակով կազմել հարցեր և ոչ մի խմբի համար առաջադրանքը չի լինում ոչ հաղթահարելի:Իմ փորձը ցույց է տվել նաև մեկ այլ դրական իրողություն՝ երբ դասարանում ստեղծվում է բարության ու միմյանց նկատմամբ կամեցողության մթնոլորտ,երախտները իրենք կարողանում են շատ ճիշտ որոշել միմյանց իմացության մակարդակը և թույլ խմբերին տալիս են ոչ շատ դժվար հարցեր,որպեսզի թույլ խմբերի անդամներն էլ մասնակցեն հետաքրքրությամբ,ոչ թե պարտադրված: Դասի այս փուլի ավարտին արդեն բոլորը տիրապետելու են նյութին թե՛ բովանդակային,թե՛ բառապաշարային առումով:	
Կշռադատում	Ըստ խմբերի կատարելու ենք տարբերակում: Այսինքն յուրաքանչյուր խմբին հանձնելու ենք նախօրոք պատրաստած ,տեքստից դուրս գրած բառերը, որոնք ունեն կիրառման տարբեր աստիճաններ, այսպես՝1-ին խումբ՝ раскинулись, плодородная, просторный,	

	считать, 2-րդ խումբ՝ цветущая, здания, необыкновенные, тысячи, 3-րդ խումբ՝ самолёт, долина, сладкие, фонтаны, 4-րդ խումբ՝город, площадь, розовый, ребята. Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը ներկայացնելու են իրենց նախադասությունները, թարգմանելու են, նշելու են իրենց օգտագործած բառերը: Բնականաբար մյուս խմբերը կարող են լսել,սովորել:	
Տնային հանձնարարություն	Որպես տնային աշխատանք հանձնարարվելու են դասագրքից նախապես ընտրված վարժությունները:Առաջին խմբին՝վարժություն 6,երկրորդ խմբին՝վարժություն 11,երրորդ խմբին՝ վարժություն 9,չորրորդ խմբին՝ վարժություն 10:Դասը պետք է կարողանան կարդալ,պատմել:Թույլ խմբերին կարելի է հանձնարարել կարդալ ու պատմել կամ առաջին մի քանի նախադասությունները,միջին խմբերին՝ ընտրել ամենակարևոր միտքը պարունակող նախադասությունները,կարդալ ու պատմել սովորել միայն դրանք:	
Անդրադարձ	Հարցադրումների միջոցով	

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Диагностическая работа по русскому языку.

Шестой класс

Время -25 минут

Вопросы-5

Цель-оценить уровень общеобразовательной подготовки в школе на данном этапе.

Составитель-Татевик Погосян

Тема-.Правописание слов с непроизносимыми согласными.Антонимы.Синонимы .Имя существительное .

1.Запишите одним словом (существительным),в котором есть непроизносимый согласный

а) ряд ступенек ……

б) тот , кто принимает участие в чём-либо ……

в) то, что всегда сияет на небе …..

2.К данным существительным подберите синонимы и запишите их.

а)печаль-

б) веселье-

в)правда-

г)холод-

3. К данным существительным подберите антонимы и запишите их.

а) радость -

б)ложь-

в)будни-

г)враг

4.Вставьте , где необходимо , пропущенные буквы .

Звез ...ный час,крутая лес..ница ,чудес ..ный закат ,извес ..ное

произведение ,ярос ...ный противник ,скорос ...ной поезд

интерес ..ная книга,хрус ...нувшая ветка .

5.От данных слова образуйте существительные и запишите их.

а) гигантский,завистливый ……

б)злостный,известный ….

в)радостный, дождливый ….

г) честный,скоростной …

д)грустный,ненастный ….

е) звездный,северный ..

Данная работа предназначена для того чтобы проверить уровень подготовки учащихся . После выполнения,учитель начинает работать методами ;групповая работа ,одна звезда одно желание.

06.10.2022 год

ՕՐՎԱ ԴԱՍԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ(երկրորդ դաս)

Որպեսզի տարբերակված առաջադրանքների հիման վրա կազմակերպվող ուսուցման դրական կողմերը ավելի

ակնառու դառնան,այստեղ նկարագրենք նաև հաջորդ դասը՝ արդեն ավելի հակիրճ, և ուշադրություն դարձնելով հատկապես դասապրոցեսի ընթացքի նկարագրությանը:

Ամսաթիվ	08.10.22	Նշումներ
		Այս դասաժամը հանդիսանում է նախորդի անմիջական շարունակությունը, դասաժամի ընթացքում շեշտը դրվելու է տնային աշխատանքի ստուգման վրա,և մինչև նոր նյութին անդրադառնալը պետք է հասկանալ՝ արդյո՞ք ամեն ինչ կարգին է, հասկացվե՞լ է անցած դասը,ի՞նչ խնդիրներ են մնացել չլուծված,ի՞նչ հիմքի վրա ենք կառուցելու հաջորդ դասը: Կկատարենք ճշտումներ, շտկումներ,նոր կանցնենք առաջ:

Դասի թեման	Столицы Армении.	
Դասի նպատակները	Անցած դասի ընթացքում անցածի յուրացման ստուգում Նոր նյութի հետ կապված՝ Առարկայական 1.Արտահայտիչ,վարժ,գեղեցիկ առոգանությամբ կարդաД տեքստը,պահպանել ռուսերենին հատուկ արտասանությունը,շեշտադրումը,արտահայտչականությունը 2.Հասկանալ կարդացածի բովանդակությունը 3.Կարողանալ յուրացնել նոր բառերը,հասկանալ դրանց իմաստը և գործածել նախադասությունների մեջ 4.Կարողանալ սեփական դատողություններն անել թեմայի շուրջ,արտահայտել անձնական կարծիք ու դիրքորոշում 5.Կարողանալ բացատրել, թե ինչ է հայրենասիրությունը, ինչով է այն արտահայտվում Ոչ առարկայական 1.Զարգացնել սովորողի երևակայությունը 2.Զարգացնել պատկերավոր մտածելու կարողությունը 3.Զարգացնել հայրենասիրության գաղափար և ազգային	

	արժանապատվություն	
Վերջնարդյունք	Կարողանալ կարդալ, վերարտադրել կարդացածը, պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին, որոնք կտրվեն ըստ տվյալ խմբերի ունակությունների:	
Կիրառվող մեթոդներ	Խմբային մեթոդ, երկու աստղիկ,մեկ ցանկություն մեթոդ, տարբերակված առաջադրանքների հանձնարարման մեթոդ:	
Ժամանակ	Կազմակերպչական մաս-3րոպե Տնային աշխատանքի ստուգում-10 րոպե Դասի հարցում,գնահատում-10 րոպե Նոր դասի բացատրում-15 րոպե Տնային աշխատանքի հանձնարարում-5 րոպե Անդրադարձ-2 րոպե	
Դասի ընթացքը.	Նախնական՝կազմակերպչական մասից հետո պետք է սկսել տնային առաջադրանքի ստուգում-քննարկումը:Դա կարելի է անել «Երկու աստղիկ,մեկ ցանկություն» մեթոդի միջոցով,այսինքն՝մյուս խմբերը պետք է լսեն առաջադրանքի կատարումը ներկայացնող խմբին ու նշեն 2 ճիշտ միտք և մեկ բացթողում կամ սխալ: Պետք է սկսել չորրորդ խմբից,այսինքն՝ ավելի հեշտ առաջադրանքի քննարկումից,որովհետև բոլորի համար էլ ավելի հեշտ կլինի	

	հունի մեջ ընկնելը և ավելի դժվար առաջադրանքին պատրաստվելը:Չորրորդ խումբը պետք է ներկայացնի իր առաջադրանքը,որը հետևյալն է՝արտագրել նախադասությունները՝ լրացնելով բաց թողնված գոյականները:Սովորողները հերթով կկարդան նախադասությունները:Մյուս խմբերը կմեկնաբանեն,եթե պետք է՝ ուսուցիչը շտկում կամ պարզաբանում կմտցնի: Երրորդ խումբը կներկայացնի իր առաջադրանքը,որը հետևյալն է՝արտագրել և լրացնել ածականների վերջավորությունները:Ուսուցիչը նախքան առաջ անցնելը բոլորի համար պետք է բացատրի ընդհանուր կանոնները,որպեսզի խմբերը կարողանան շտկել երրորդ խմբի սխալները:Վերջում դարձյալ ամփոփվելու է ուսուցչի կողմից; Հաջորդիվ երկրորդ խումբն է ներկայացնելու իր առաջադրանքը՝տրված բառակապակցությունները գրել եզակի թվով:Դարձյալ ստուգվում և ամփոփվում է նույն ձևով: Վերջում առաջին խումբը ներկայացնում է իր առաջադրանքը,որը ամենաբարդն է՝նախադասություններից դուրս գրել ուղղական հոլովով դրված գոյականները՝իրենց հետ առնչվող բառերի հետ:Ստուգումը կատարվում է նույն ձևով:Յուրաքանչյուր խմբի աշխատանքը պետք է գնահատել որևէ միավորային սանդղակով,օրինակ՝1-3,կամ՝1-	

	10:Գնահատումը ևս կարելի է վստահել աշակերտներին: Ամբողջ այս աշխատանքը հազիվ 15 րոպե պահանջի,բայց դրա դրական արդյունքը ,կարծում եմ,բավականին ակնհայտ կլինի: Հաջորդ 10 րոպեն պետք է հատկացնել դասի հարցմանն ու գնահատմանը: Նոր դասը կարդալը, և հարցերի միջոցով ամրապնդելը, ուսուցչի կողմից համարում եմ պարտադիր,դրա համար կարելի է հատկացնել 10 րոպե:	
Տնային առաջադրանք	Որպես տնային աշխատանք հանձնարարելու ենք շարադրություն՝ դարձյալ որոշակիորեն տարբերակված սկզբունքով:Այսինքն՝առաջին խումբը գրելու է շարադրություն Հայաստանի մայրաքաղաքների վերաբերյալ,երկրորդ խումբը գրելու է նույն շարադրությունը՝ գործածելով տրված բառերը,երրորդ խումբը՝նույնը՝ գործածելով տրված բառակապակցությունները,որոնք ավելի հեշտացնելու են աշխատանքը,իսկ չորրորդ խումբը պարզապես տրված բառերով կազմելու է նախադասություններ:Դարձյալ նախօրոք բառերը ընտրվելու են և տեղում բաժանվեն աշակերտներին՝ժամանակի խնայողության նպատակով:Դրա համար երկու րոպեն լրիվ բավական է:	

Անդրադարձ	Ինչ գիտեի, ինչ իմացա	

ՀԱՎԵԼՎԱԾ2

Диагностическая работа по русскому языку.

Шестой класс

Цель- проверка полученных знаний на данном этапе.

Вопросы-5

Время-25 минут

Создатель-Татевик Погосян

Тема-Имя существительное.На свете есть одна Армения .Столицы Армении.

1.У Армении сколько сотолиц было?

а.12 в.13

б.34 г.45

2.Какой король построил крепость Двин и в каком веке?

а.Хосров 5 век в.Тигран Великий 4 век

б.Арташес 3 век г.Ашот Еркат 6 век

3.Сколько падежей в русском языке?

а.4 б.6

в.5 8.8

4.Отметьте ряд где все слова мужского рода

а.дом,телефон,шоссе,шкаф

б.небо,тетради,люди,карандаш

в.школа, рука,лицо, часы

г.глухарь,машина,малина картофель

5.Данные слова напишите во множественном числе.

а.человек……,рука …..

б.собака……..,учитель…

в.труба……..,жена…..

г.преступник……..,кукла…..

08. 10. 2022.год